

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հովհաննես Ստեփանյան
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Իրավաբանական գիտությունների և իրավական գիտելիքի տարբեր մակարդակների և դրանց հարաբերակցության հարցը միշտ գտնվել է իրավագետների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, իրավաբանական գրականության մեջ քննարկման առարկա են դարձել ճյուղային իրավաբանական գիտությունների և իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի ընդհանուր տեսության և իրավունքի փիլիսոփայության հարաբերակցության խնդիրները, ինչպես նաև նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը իրավագիտության մեջ:

Այսպես, ռուս ճանաչված տեսաբան Ս. Ալեքսենը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ պատմականորեն իրավագիտությունը ձևավորվել է որպես գործնական գիտելիքների բնագավառ, ինչպիսին է, օրինակ, բժշկագիտությունը, արհեստների ընդհանրացված փորձը և այլն: Սկզբնական շրջանում, ինչպես և հետագայում, իրավական գիտելիքներն առաջին հերթին ունեցել են և այժմ էլ ունեն տեխնիկական-գործնական բնույթ, երբ այդ գիտելիքների սոցիալական, առավել ևս հոգևոր առանձնահատկությունները ոչ միշտ են դրսևորվում, և ոչ այնքան ցայտուն: Այս տեսակետի համաձայն, իրավագիտության՝ որպես գործնական տեսության այդ առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, որ գործող իրավունքը գործնական հարաբերություններում դրսևորվում է յուրահատուկ սոցիալական իրողությունների՝ օրենքների, իրավահարաբերությունների, իրավաբանական պրակտիկայի, իրավական սովորույթների, դատական նախադեպերի տեսքով: Սոցիալական հենց այդ իրականությունն էլ պայմանականորեն դարձել է իրավական գիտելիքների աղբյուր և իրավագիտության նախասկզբնական առարկա: Այդ պատճառով, բովանդակային առումով իրավական գիտելիքները ձեռք են բերել իրավաբանական դոգմատիկայի կամ իրավաբանական պոզիտիվիզմի բնույթ:¹

Այստեղից հետևություն է արվում, որ իրավաբանական դոգմատիկան կամ իրավաբանական պոզիտիվիզմը գիտական և ուսումնական առարկա է, որն ունի վերլուծական-իրավագիտական բնույթ, վերլուծական իրավագիտություն է: Փաստորեն, վերլուծական իրավագիտությունը ծնվել է մարդկային կյանքի, իրավաբանական պրակտիկայի, իչպես նաև օրինաստեղծ գործունեության պահանջներից և ծառայում է նրանց: Այդ նույն պահանջներից հետագայում ծնվել է նաև իրավունքի սոցիոլոգիան: Վերջինս կյանքի է կոչվել հիմնականում այն պատճառով, որ իրավաստեղծ և իրավակիրառական գործունեության ընթացքում անհրաժեշտություն է ծագել հաշվի առնել նաև սոցիալական իրականության բազմապիսի տնտեսական, քաղաքական, անհատական-կենցաղային, հոգեբանական և այլ գործոններ, որոնք սերտորեն կապված են իրավունքի և իրավունքի գործնական խնդիրների լուծման հետ:²

Վերլուծական իրավագիտության զարգացումը հանգեցրել է նրա ճյուղավորմանը՝ առաջացել են իրավական գիտելիքների այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են իրավունքի պատմությունը և համեմատական իրավագիտությունը:³

Այս տեսակետի համաձայն՝ վերլուծական իրավագիտության հիմնական առարկան «իրավունքի դոգմաներն են»: Հեղինակը, «իրավունքի դոգմա» ասելով, նկատի ունի այն հիմքի հաստատունությունն ու անառարկելիությունը, որի վրա հենվելով են լուծվում իրավաբանական բոլոր գործնական խնդիրները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենքներում և իրավունքի այլ աղբյուրներում արտահայտված իրավունքը մարդկանց և պետական մարմինների առջև հանդես է գալիս հենց որպես «դոգմա», որպես հաստատուն, անփոփոխ, տվյալ պահին անառարկելի հիմք՝ մարդկանց վարքագծի և պետության գործողությունների, նրանց կոդմից կայացվող որոշումների համար:⁴

Իրավունքի դոգմաները ստորաբաժանվում են երեք խմբի: Իրավունքի դոգմայի կենտրոնական օղակը, նրա միջուկն, այս տեսակետի համաձայն, իրավաբանական նորմերն են: Այստեղից հետևություն է արվում, որ իրավունքի դոգման ամենից առաջ նորմատիվ կազմավորում է: Նրա բաղադրիչներն են իրավական նորմերը՝ իրենց բոլոր տարատեսակներով, աուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները, վերջիններիս

կապը՝ իրավահարաբերությունները, ինչպես նաև իրավաբանական փաստերը: Իրավունքի դոգմայի երկրորդ խմբի մեջ են մտնում իրավունքի աղբյուրները՝ օրենքները, այլ նորմատիվ ակտերը, դատական նախադեպերը: Իրավունքի դոգմայի բաղադրիչների երրորդ խումբն են կազմում անհատական իրավաբանական ակտերը, իրավունքի մեկնաբանման և նրա իրացման հետ կապված գործողությունները:⁵

Քննարկվող տեսակետի համաձայն վերլուծական իրավագիտության բաղկացուցիչ մասն է համարվում իրավունքի ընդհանուր տեսությունը: Վերջինս բացահայտում և ի մի է բերում այն տվյալները, որոնք ընդհանուր են իրավունքի բոլոր ճյուղերին: Այդ տվյալներն, ըստ էության, իրավունքի բոլոր ճյուղերին ենթահատուկ, բայց այսպես ասած, «փակագծերից» դուրս հանված իրավունքի դոգմայի ընդհանուր կայությունն են: Այդ կայությունն ընդգրկում են, նախ՝ դրական իրավունքի կառուցվածքը՝ իրավական նորմեր, իրավահարաբերություններ, իրավահարաբերությունների տարրեր, երկրորդ՝ իրավունքի արտաքին ձևերը՝ օրենքներ, իրավաբանական տեխնիկա, և վերջապես՝ իրավաբանական այն երևույթները, որոնք կապված են իրավունքի գործողության և իրացման հետ՝ իրավունքի կիրառման ակտեր, մեկնաբանման եղանակներ և այլն:⁶

Վերլուծական իրավագիտության մեջ առանձնացող իրավունքի ընդհանուր տեսությունը, որն անվանվում է նաև վերլուծական տեսություն, իրավունքի ընդհանուր տեսության առաջին աստիճանը կամ մակարդակն է: Իրավունքի ընդհանուր տեսության երկրորդ կամ առավել բարձր մակարդակը իրավունքի ընդհանուր տեսությունն է: Իրավունքի տեսությունն այս մակարդակում ուսումնասիրության առարկա է դարձնում արդեն ողջ իրավական մատերիան, մարդկանց վարքագծի կարգավորման և պետական մարմինների գործունեության կանոնակարգման իրավաբանական եղանակների ողջ համակցությունը:

Այս տեսակետի համաձայն, փաստորեն, ունենք իրավունքի վերլուծական տեսություն, որի ուսումնասիրության հիմնական առարկան իրավունքի դոգման է և այդ տեսության շրջանակներում առանձնացվող իրավունքի ընդհանուր տեսությունը, որն իր հերթին ունի երկու մակարդակ՝ վերլուծական և ինստրումենտալ: Այդ աստիճանները հեղի-

նակը բնութագրում է հետևյալ կերպ. «Իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում անհրաժեշտ է խստորեն տարբերել երկու մակարդակ.

- վերլուծական մակարդակի ընդհանուր տեսություն, որը բացահայտում է իրավունքի դոգմայի՝ որպես իրավական նորմերի համակարգի տարրերը, ատոմները, նրանց ներքին կառուցվածքը, ձևերը, գործողությունը և ամրագրում է իրավունքի՝ որպես նորմատիվ երևույթի այդ «տարրական մասնիկները»՝ իրավաբանական բոլոր առարկաների հետ ընդհանուր հասկացություններում.

- ինստրումենտալ մակարդակի ընդհանուր տեսություն, որը հիմնված է ինստրումենտալ մոտեցման վրա և կոչված է իրավական միջոցների ողջ համակցության հիման վրա լուսաբանել իրավական մատերիայի առավել խորը շերտերը, նրա յուրահատուկ տրամաբանությունը և ինստրումենտալ կազմավորման առանձնահատկությունները, իրավունքի կառուցվածքը, հատկանիշները, մեխանիզմները, գործառնությունը, հասարակական կյանքի վրա իրավական ներգործության ուղղությունները և տիպերը»:⁷

Դժվար չէ նկատել, որ այսպիսի մոտեցումը տիպիկ նորմատիվիստական-եռատիաստական մոտեցում է, որտեղ առաջնային դեր է խաղում «իրավունքի դոգման»՝ իրավական նորմերը, սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները, իրավահարաբերությունները, իրավաբանական փաստերը և այլն: «Իրավական մատերիան» (հեղինակի արտահայտությունն է), բնական է, որ առկա է անկախ մարդկանց գիտակցությունից և կամքից, և իրավագիտության այս սխեմայում մարդն ընդհանրապես զեղչված և դուրս է մղված: Այս մոտեցումը դասական փիլիսոփայության հիմնական դրույթներին համահունչ տիպական մոտեցում է: Առավել ևս, նման մոտեցումը հետաքրքրական է դարձնում իրավունքի փիլիսոփայության վերաբերյալ հեղինակի տեսակետը:

Պարզվում է, որ իրավունքի փիլիսոփայությունը, հեղինակի պատկերացումների համակարգում, իրավունքի տեսական իմաստավորման առավել բարձր աստիճանը կամ մակարդակն է: Իրավունքի փիլիսոփայությունը հեղինակի կողմից դիտվում է որպես մարդկային կյանքում, մարդկային կեցությունում իրավունքի վերաբերյալ գիտելիքների առանձնահատուկ ոլորտ: Իրավունքի փիլիսոփայությունը կոչված է՝ բա-

ցահայտելու իրավունքի աշխարհայացքային իմաստը և նշանակությունը մարդկանց կյանքում: Այն ձգտում է իրավունքը հիմնավորել մարդկային կեցության էության, նրանում գոյություն ունեցող արժեքների համակարգի տեսանկյունից:⁶ Վերջապես, իրավունքի տեսական իմաստավորման այնպիսի բարձր մակարդակում, ինչպիսին է իրավունքի փիլիսոփայությունը, հեղինակը հարկ է համարում հիշատակել մարդկային կեցությունը, մարդկային արժեքների համակարգը, և ընդհանրապես մարդն, առանց որի իրավունքը և նրա վերաբերյալ վերլուծական կամ ինստրումենտալ տեսությունները գրոշի արժեք չունեն:

Մակայն իրավունքի փիլիսոփայության հարցում հեղինակն իր ուրույն մտեցումներն ունի: Նա գտնում է, որ իրավունքի փիլիսոփայությունը կարող է հանդես գալ երկակի ձևով՝ որպես որևէ փիլիսոփայական համակարգի բաղկացուցիչ կամ որպես իրավագիտության մաս: Հնարավոր թյուրըմբռումներից խուսափելու համար ներկայացնենք այդ միտքը հեղինակի խոսքերով: Նա գրում է. «Շեշտելով իրավունքի փիլիսոփայության մի քանի ընդհանրացված հասկանիչները, միևնույն ժամանակ անհրաժեշտ է ելնել այն բանից, որ հումանիտար գիտելիքի տվյալ ոլորտը կարող է կազմավորվել գիտական երկու հարթություններում և համապատասխանաբար հանդես գալ երկուսից մեկի ձևով՝ որպես բուն փիլիսոփայական առարկա, որն իրավունքը քննարկում է որոշակի համապարփակ փիլիսոփայական համակարգի կամ պատմափիլիսոփայական մշակումների տեսանկյունից և նրանց կազմում, և որպես իրավագիտության՝ փիլիսոփայական-իրավական գիտելիքների ոլորտի բաղկացուցիչ մաս, երբ իրականացվում է (առավել բարձր աստիճանի է հասնում) իրավական նյութի ընդհանուր տեսական մշակումը»:⁹

Այս մտեցումը տիպիկ գիտապաշտական մտեցման անգերազանցելի օրինակ է: Այս մտեցման համաձայն, փաստորեն, իրավագիտության և իրավունքի փիլիսոփայության առարկայական տիրույթը նույնական է: Տարբերությունը միայն կատարվող ընդհանրացումների և վերացարկումների աստիճանի մեջ է: Այս մտեցման մեջ առանձնակի ընդվզում է առաջացնում իրավունքի փիլիսոփայությունը իրավագիտության մաս համարելու վիճելի դրույթը: Փաստորեն, նման տեսակետը

տեսական մտքի շարժման ուղղությունը նույնացնում է այդ նույն մտքի արգասիքի՝ իրավունքի վերաբերյալ փիլիսոփայական գիտելիքների հետ: Բացի այդ, ցանկացած գիտություն, այդ թվում՝ իրավագիտությունը, զուտ տեսական գիտելիքների համակցություն է, որ չեզոք է դրանց բովանդակության նկատմամբ՝ մարդկանց վերաբերմունքի տեսանկյունից: Մինչդեռ փիլիսոփայությունը նաև աշխարհայացք է, ավելի ճիշտ ռացիոնալացված աշխարհայացք, որի մեջ գերիշխում են արժեքային տարրերը, այսինքն՝ փիլիսոփայությունը ոչ միայն տեսական գիտելիքների, այլև այդ գիտելիքների նկատմամբ որոշակի վերաբերմունքի և վերաբերմունքին համապատասխան գործունեություն իրականացնելու պատրաստակամության արտահայտություն է: Դա վերաբերում է նաև իրավունքի փիլիսոփայությանը, որը տվյալ պարագայում շեշտադրում է իր արժեքային չափումը, այսինքն՝ առավելապես պիտոյականի ոլորտի գիտելիքներ է պարունակում:

Իրավաբանական գրականության մեջ կա նաև իրավունքի ընդհանուր տեսության և իրավունքի փիլիսոփայության հարաբերակցության վերաբերյալ մեկ այլ տեսակետ, որը փոքր-ինչ այլ կերպ է պատկերացնում այդ հարաբերակցությունը: Այդ տեսակետի համաձայն և՛ իրավունքի փիլիսոփայությունը, և՛ իրավունքի ընդհանուր տեսությունը փորձում են հասկանալ, թե ինչ է իրավունքը, ինչով է այն ճանաչվում, որոնք են իրավունքի հիմքերն ու նպատակները: Սակայն եթե իրավունքի ընդհանուր տեսությունը փորձում է այդ նպատակին հասնել՝ ելնելով իրավունքից և նրա կիրառման կանոններին տիրապետելու նպատակով, ապա իրավունքի փիլիսոփայությունը այդ նույն խնդիրները քննարկում է՝ ելնելով փիլիսոփայությունից՝ իրավականը մետաֆիզիկայի վերածելու նպատակով:¹⁰

Իրավունքի փիլիսոփայության և իրավունքի ընդհանուր տեսության հարաբերակցության խնդիրը կարևոր տեսական նշանակություն ունի, այդ առումով ավելորդ չէ կանգ առնել այդ խնդրի քննարկման վրա: Խնդիրը լուծելու նախապայմաններից մեկը իրավունքի փիլիսոփայության էությունը բացահայտելն է:

Իրավունքի փիլիսոփայության էության վերաբերյալ տարբեր տեսակետներ կան: Վերը քննարկվող տեսակետի հեղինակի համաձայն՝ «իրավունքի փիլիսոփայության» որպես իրավական գիտելիքների բարձրա-

կետի մեջ վճռական նշանակություն ունի նրա «աշխարհայացքային միջուկը», իրավունքի աշխարհայացքային ըմբռնումը (ըստ Հեգելի՝ «իրավունքի» ինքն իրեն գիտակցող գաղափարը»), իրավունքում արտահայտված արժեքները և ինքը՝ իրավունքը, որպես կարևորագույն աղիակական արժեք ըմբռնելը: Իր ամփոփ հետևություններով իրավունքի փիլիսոփայությունը նպատակառուղոված է իրավունքի տիեզերական առեղծվածը բացահայտելուն:¹¹

Գեղեցիկ է ասված՝ իրավունքի տիեզերական «առեղծվածը»: Իսկապես, իրավունքի փիլիսոփայությունը գործ ունի իրավունքի առեղծվածի հետ, որը չի կարող բացահայտել իրավունքի ընդհանուր տեսությունը, որովհետև նրա առաջ ծառացած են բոլորովին այլ՝ հիմնականում գործնական խնդիրներ: Իսկ իրավունքի «առեղծվածը» գտնվում է իրավունքից «այն կողմ», ներառված չէ իրավունքի ընդհանուր տեսության առարկայական տիրույթում: Իրավունքի «առարկայական տիրույթից» դուրս գտնվող առեղծվածը տրանսցենդենտալ է այդ առարկայական տիրույթի նկատմամբ, հետևաբար նաև իրավունքի ընդհանուր տեսությանը անհասանելի:

Այս տեսակետին համահունչ է նաև իրավունքի փիլիսոփայության վերաբերյալ արտահայտվող մեկ այլ միտք, ըստ որի՝ իրավունքի փիլիսոփայությունը զբաղված է իրավունքի մասին ճշմարտության որոնումներով:¹²

Իրոք, ամենաընդհանուր կերպով կարելի է ասել, որ իրավունքի փիլիսոփայության առարկան իրավունքի առեղծվածն է, որի լուծումն էլ հենց իրավունքի ճշմարտության բացահայտումն է: Հասկանալի է, որ իրավունքի մասին ճշմարտությունը նույնական չէ իրավունքի ճշմարտությանը, և այստեղ կրկին հառնում է գոյի և պիտոյի հարաբերակցության հավերժական խնդիրը:

Փիլիսոփայական և իրավաբանական գրականության մեջ իրավունքի փիլիսոփայության առարկան բնութագրվում է տարբեր կերպ: Մի դեպքում այն բնութագրվում է որպես իրավական կեցության, դիալեկտիկայի և տրամաբանության մշակում:¹³ Մեկ այլ դեպքում, որի մասին մենք արդեն նշել ենք, «իրավունքի փիլիսոփայության առարկան իրավունքն է՝ օրենքի հետ նրա տարբերակման և հարաբերակցության տեսանկյունից»:¹⁴ Այս

տեսակետը հիմք ընդունելով քննարկվում են իրավունքի գոյաբանական, իմացաբանական, արժեքաբանական հիմնախնդիրները: Կան նաև իրավունքի փիլիսոփայության վերաբերյալ այլ տեսակետներ, որոնք յուրահատուկ տեսանկյունով են քննարկում իրավունքի փիլիսոփայական խնդիրները: Այդպիսի տեսակետներից մեկի համաձայն՝ «իրավունքը կարելի է դիտել որպես տեքստ (իրավաբանական հերմենևտիկա), որպես սոցիալական ինտիտուտ (իրավունքի սոցիոլոգիա), որպես նորմերի համակցություն (իրավունքի տեսություն): Իրավունքի փիլիսոփայությունը այն դիտում է բացարձակապես որպես ոգու ձև»:¹⁵

Իրավաբանական գրականության մեջ տեսակետ կա նաև, որ իրավունքի փիլիսոփայությունը, որպես այդպիսին, ընդհանրապես գոյության իրավունք չունի: Այս տեսակետի համաձայն, ճիշտ է, պետության և իրավունքի մասին համակարգված առաջին գիտելիքը ձևավորվել է փիլիսոփայության ընդերքում, սակայն ժամանակի ընթացքում իրավունքի տեսության ընդհանուր հիմնախնդիրները այնքան են ամրացել, որ կարող են ինքնուրույն գոյություն ունենալ իրավաբանական գիտությունների ոլորտում՝ կտրվելով մայրական խնամակալությունից:¹⁶ Իրավունքի ընդհանուր տեսությունը պետք է լինի միակ և միասնական գիտություն՝ իրավունքի գործառնության և զարգացման ընդհանուր օրինաչափությունների, և ոչ թե փիլիսոփաների կամ իրավագետների կողմից միևնույն ժամանակ եղանակներով բխեցված կապերի կամ մարդու «բնական» իրավունքների մասին: Ճիշտ է, իրավունքի տեսության մեջ օգտագործվում և պետք է օգտագործվեն փիլիսոփայական կատեգորիաներ և օրենքներ, սակայն այդ հանգամանքը բոլորովին հիմք չէ առանձին իրավունքի փիլիսոփայական տեսություն ստեղծելու համար:¹⁷ Հիմնվելով մարքսիստական փիլիսոփայության դրույթների վրա և խիստ քննադատության ենթարկելով իրավունքի փիլիսոփայության տարբեր տեսությունները՝ հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության. «Իրավունքի փիլիսոփայությունը, դրական դեր խաղալով իրավագիտության ձևավորման գործում, ժամանակակից պայմաններում հնացածություն է: Ժամանակակից իրավագիտությունը ունի իր անմիջական բովանդակությունը և իրավունքի օրինաչափությունների մասին առավել խորը գիտելիքներ, քան ինչ-որ ժամանակ միևնույն ժամանակ եղանակով ստեղծված

իրավունքի փիլիսոփայությունները: Ամենաբարդ, ամենախորքային գիտելիքները իրավունքի մասին կազմում են իրավունքի ընդհանուր տեսության միասնական և ամբողջական գիտության բովանդակությունը, իսկ փիլիսոփայության դրույթները, հետևությունները ծառայում են որպես նրա տեսական և մեթոդաբանական հիմքեր»: ¹⁶ Այս տեսակետը հիմնված է մարքսիստական փիլիսոփայության այն գաղափարի վրա, որ կոնկրետ գիտությունները կարիք չունեն, որպեսզի նրանցում ձևավորվեն հատուկ փիլիսոփայական բաժիններ: Այդպիսի բաժինների առկայությունը վկայում է բնության և հասարակության ճանաչողության որոշակի, առավել ցածր մակարդակի մասին:

Այս տեսակետի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Նախ, իրավունքի փիլիսոփայությունը չի կարող դիտվել իրավունքի տեսության առանձին բաժին: Իրավունքի փիլիսոփայությունը ինքնուրույն տեսություն է, ուսումնասիրության սեփական առարկայով և եզրանակներով: Երկրորդ, առայժմ վաղ է խոսել այն մասին, որ իրավունքի տեսությունը կարողացել է բացահայտել իրավունքի գործառնության և զարգացման բոլոր օրինաչափությունները, և այլևս փիլիսոփայական մոտեցման կարիք չունի: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակը ընդունում է փիլիսոփայական կատեգորիաները և օրենքները իրավունքի տեսության մեջ օգտագործելու անհրաժեշտությունը: Իհարկե, հեղինակը նկատի ունի միայն մարքսիստական փիլիսոփայության կատեգորիաները և օրենքները, բայց մարքսիստական փիլիսոփայությունից բացի կան նաև բազմաթիվ այլ ուսմունքներ, դպրոցներ, որոնց նկատմամբ մարքսիստական փիլիսոփայության առավելությունը, մեղմ ասած, ապացուցելի չէ: Ինչպիսի փիլիսոփայական կատեգորիաներ և օրենքներ կօգտագործվեն իրավունքի տեսության մեջ, այնպիսի իրավունքի տեսություն կձևավորվի, իսկ դա նույնպես փիլիսոփայության, ավելի ճիշտ՝ փիլիսոփայական դիրքորոշման հիմնախնդիր է:

Իրավունքի փիլիսոփայության և նրա առարկայի մասին պատկերացում կազմելու համար, նախ, անհրաժեշտ է պարզել, թե ինչ է փիլիսոփայությունն ընդհանրապես և ինչ է այն ուսումնասիրում: Հարկ է նկատի ունենալ, որ փիլիսոփայությունն ինքը բազմադեմ է, բազմապիսի, և փիլիսոփայական ուսմունքներից յուրաքանչյուրն ունի իր ուրույն

տեսակետը նշված խնդիրների վերաբերյալ: Փիլիսոփայական գրականության մեջ տարածված տեսակներից մեկի համաձայն փիլիսոփայությունը աշխարհի, մարդու, աշխարհում մարդու գրաված տեղի ու դիրքի և աշխարհի նկատմամբ մարդու հարաբերության վերաբերյալ համակարգված հայացքների ամբողջություն է: Մակայն անհրաժեշտ է նշել, որ փիլիսոփայությունը սոսկ վերացական, անկիրք, զուտ մտահայեցողական գաղափարների ամբողջություն չէ: Փիլիսոփայությունն ունի նաև հոգևոր-գործնական, արժեքային կողմ: Փիլիսոփայության գաղափարներն ունեն նաև որոշակի կենսական իմաստ, արժեքային կողմնորոշիչ բնույթ: Վերջին հաշվով, փիլիսոփայությունը ոչ միայն գիտելիք է, այլև գիտելիքների բովանդակության նկատմամբ որոշակի վերաբերմունք, և այդ վերաբերմունքին համապատասխանաբար գործելու ներքին պատրաստակամություն: Այդ կապակցությամբ ահա թե ինչպես է բնութագրվում փիլիսոփայությունը. «Փիլիսոփայության պատմական կեցությունը երկակի է, այդ պատճառով էլ՝ եզակի. որպես գիտություն, որը բացահայտում է առարկայական աշխարհի և ճանաչողության իրական հարաբերությունները, այն զարգանում է, և երա տեսական կառույցները անցողիկ են (ինչն իր պատմափիլիսոփայական ուսմունքում ընդգծել է Հեգելը): Բայց որպես ոգու արժեքային-անձնային դրսևորում, որպես գիտության կենսական-իմաստային կողմնորոշում, փիլիսոփայական ուսմունքը ճեղքում է ժամանակի ծածկոցը և մուտք է գործում հավերժություն, այդ պատճառով չի կարող ո՛չ հեռանալ, ո՛չ զիջել մշակութի մեջ իր եզակի, երբեք և ոչնչով չփոխարինվող տեղը և որ տեսական կառույցի: Համաշխարհային փիլիսոփայությունը հավասարապես ներկայացնում են «նորը» և «եինը», ինչպես մեր երկրային քաղաքակրթությունը հավասարապես ներկայացնում են Բուդդան և Քրիստոսը, Էսքիլեսը և Շեքսպիրը, Վերգիլիոսը և Դանթեն՝ անկախ դարերից և հազարամյակներից, որոնք նրանց բաժանում են ժամանակի մեջ»:¹⁹

Եթե այս տեսանկյունից դիտենք իրավունքի փիլիսոփայությունը և կրկին անդրադառնանք իրավունքի ընդհանուր տեսության հետև նրա հարաբերակցությանը, ապա կարող ենք ասել, որ եթե իրավունքի ընդհանուր տեսությունը գիտություն է, իրավագիտության մաս, ապա իրավունքի

փիլիսոփայությունը *նաև* գիտություն է և գիտությանը տրանսցենդենտալ այնպիսի մտակառույց, որը նրան հաղորդում է անանց արժեք:

Փիլիսոփայական գրականության մեջ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ թեև փիլիսոփայական ուսմունքները բազմազան են, բայց բոլորն էլ սկսվում են մեկ հարցադրումից: Բոլոր փիլիսոփայական ուսմունքներին ներհատուկ այդ հարցադրումը այն է, թե ինչու աշխարհում կա մի ինչ, այլ՝ ոչինչ: Այսինքն՝ մի ինչը չպետք է լիներ, բայց կա, գոյություն ունի, մի հանգամանք, որ զարմանք է հարուցում: Ընդ որում, այդ զարմանքը ոչ թե սովորական, առօրեական մարդկային զարմանք է, ոչ թե մարդու զարմանալու ընդունակությունը, այլ մարդու՝ հասկանալու ընդունակությունը, թե մարդիկ ինչու են զարմանում: Ահա հենց նշված հարցն է փիլիսոփայության առաջին և հիմնական հարցը, մնացյալը պատվում է այդ հարցի շուրջը:²⁰

Եթե իրավունքի փիլիսոփայությունը քննարկում ենք նշված հարցադրման տեսանկյունից, ապա պարզվում է, որ այն կոչված է պատասխանելու մեկ՝ հարցի՝ ինչո՞ւ կա իրավունք: Այդ հարցադրման տրամաբանությունը մեզ հուշում է, որ, փաստորեն, զարմանալի է, որ հասարակության մեջ իրավունք գոյություն ունի: Այո՛, զարմանալի է ոչ թե իրավունքի բացակայությունը հասարակական կյանքում, քանոն ու կործանումը, այլ իրավունքի, կարգ ու կանոնի գոյությունը: Ահա այս հարցին պետք է պատասխանի իրավունքի փիլիսոփայությունը: Այս հարցի լուծման ընթացքում կարող են ծագել բազմաթիվ հարակից հարցեր, որոնց լուծումից է կախված նաև վերը նշված հիմնական հարցի պատասխանը, ինչպես նաև իրավունքի փիլիսոփայության և իրավունքի ընդհանուր տեսության հարաբերակցության խնդրի լուծումը: Մասնավորապես, կարող է հարց ծագել, թե ինչպես և որտեղ պետք է փնտրել իրավունքի փիլիսոփայության հիմնական հարցի պատասխանը՝ բնական կամ հասարակական-պատմական իրողություններում, թե՞ մարդու հոգեղենության խորքային շերտերում, զգալի աշխարհի ակնառու երևույթներում, թե՞ իմանալի տրանսցենդենտալ հարթության խորխորատներում: Այս հարցադրումները հենց այնպես չեն արվում, դրանք լուրջ և մտքի մեծ ներուժ պահանջող հարցեր են, որոնց լուծումը մասամբ

պայմանավորված է նաև այս կամ այն հետազոտողի աշխարհայեցողությունից:

Իրավաբանական գրականության մեջ կա նաև մեկ այլ տեսակետ, որն առավել ամփոփ և կոտ տրամաբանությամբ է ներկայացնում իրավական գիտելիքների տարբեր մակարդակների խնդիրը: Այս տեսակետի համաձայն առանձնացվում է իրավական գիտելիքների երեք մակարդակ՝ գործնական իրավագիտություն, իրավունքի ընդհանուր տեսություն և իրավունքի փիլիսոփայություն, որոնցից յուրաքանչյուրն ունի ուսումնասիրության իր առարկան, խնդիրները և նպատակները:²¹

Այս տեսակետի համաձայն գործնական իրավագիտության առարկան է համարվում գործնական իրավունքը, խնդիրը՝ գործող իրավունքի իմաստի և ոգու բացահայտումը, նպատակը՝ իրավունքի գործնական կիրառումը: Գործնական իրավագիտությունը ընդգրկում է ճյուղային իրավաբանական գիտությունները, որոնք ուսումնասիրում են իրավունքի առանձին ճյուղերը, իրավունքի այս կամ այն կոնկրետ ճյուղի նորմերը, ինստիտուտները, իրավահարաբերությունները: Այս գիտություններն առավել մոտ են կանգնած իրավաբանական պրակտիկային, և ընդհանուր առմամբ, գործնական իրավագիտությունն ունի մեկնաբանական, ավելի ճիշտ՝ նկարագրական-մեկնաբանական բնույթ: Գյուղային իրավաբանական գիտությունները կարող են վեր հասնել գործող օրենսդրության առանձին թերությունները, բացահայտել օրենսդրության բացերը, հակասությունները, նշել դրանց վերացման ուղիները: Իսկապես, ճյուղային իրավագիտության աշխատությունների և մեկնադրությունների մեծ մասը հիմնականում նվիրված են նշված հիմնահարցերի քննարկմանը: Ինչ խոսք, գործնական իրավագիտությունը իր տեղն ու դերը ունի իրավական գիտելիքների համակարգում, սակայն գործնական իրավագիտության հնարավորությունները *օրենսդիրական* սահմանափակ են, սահմանափակված են «իրավունքի դոգմայով»: Դա վերաբերում է հատկապես գործող իրավաբաններին, որոնց իրավագիտակցությունը ձևավորվում է ճյուղային իրավական գիտությունների «պատկերով և նմանությամբ»: Այդ կապակցությամբ դիպուկ է ասված, որ «իրավունքի տվյալ ճյուղի որոշակի կատեգորիայի գործերի լուծման ունակությունը հնարավորություն չի ընձեռում կանխորոշելու իրավունքի ընդհանուր բարեփո-

խումները, եթե այդպիսի բարեփոխման սոցիալական անհրաժեշտությունը հասունացել է: Առկա իրավունքի հասկացություններով և ձևակերպումներով մտածելու սովորությունը իրավաբանների մի մասի մոտ առաջացնում է պահպանողականություն, իրավական համակարգում նորությունների մերժում, նույնիսկ եթե այդ նորությունները կատարելագործում են իրավունքի բովանդակությունը և նրա իրացման արարողակարգերը»:²²

Իրավական գիտելիքների երկրորդ՝ առավել բարձր մակարդակ է համարվում իրավունքի ընդհանուր տեսությունը: Մկզբնական շրջանում իրավունքի ընդհանուր տեսությունը զարգացել է որպես ճյուղային գիտությունների տեսական հանրագումար, սակայն շուտով անհրաժեշտություն է առաջացել միավորել ճյուղային գիտությունների ընդհանրացումները և հետևությունները, մշակել հասկացությունների և կատեգորիաների այնպիսի համակարգ, որը կարողանա արտացոլել ժամանակակից իրավունքի ընդհանուր և կայուն հատկանիշները:²³

Իրավական գիտելիքների երրորդ՝ ամենաբարձր մակարդակն է համարվում իրավունքի փիլիսոփայությունը, որը ձգտում է հասու լինել իրավունքի կեցության օրինաչափություններին, նրա տեղին ու դերին սոցիումալիզմային աշխարհում, բացահայտել իրավունքի կապը տարբեր քաղաքակրթությունների, մարդու, կոլեկտիվների, հասարակության և պետության, ինչպես նաև հասարակական գիտակցության և մշակույթի հետ: Ի տարբերություն իրավունքի ընդհանուր տեսության, որը հիմնվում է իրավունքի փորձնական նյութի ընդհանրացման վրա, իրավունքի փիլիսոփայությունը հենվում է իդեալների, արժեքային կողմնորոշումների վրա, այսինքն՝ իրավունքի փիլիսոփայությունը փորձում է պարզել, թե ինչպիսին պետք է լինի իրավունքը:²⁴ Չա նշանակում է, որ այս տեսակետի համաձայն, եթե իրավունքի ընդհանուր տեսությունը ուսումնասիրում է իրավունքի գոյը, ապա իրավունքի փիլիսոփայությունը՝ իրավունքի պիտոն:

Իրավունքի փիլիսոփայության և իրավունքի ընդհանուր տեսության հարաբերակցությունը գոյի և պիտոյի տեսանկյունից քննարկելը օգտակար են համարում նաև այլ իրավագետներ: Այդ կապակցությամբ նշվում է հետևյալը. «Հետադասական գիտելիքը ենթադրում է գաղափարախո-

սության առանձնացումը իրավական գոյաբանությունից (այսինքն՝ այն տեսությունից, որը սահմանում է, թե ինչ է իրավունքը), բայց մյուս կողմից աներաժեշտ է զիտակցաբար արմատավորել և հիմնավորել որոշակի իրավական գաղափարախոսություն, իրավական ընդհանուր պատկերացում այն դեպքում, երբ խոսքը իրավական իդեալների մասին է (այն մասին, թե ինչպիսին պետք է լինի իրավունքը այս կամ այն սոցիոմշակութային կոոռդինատներում), քանի որ իրավական գաղափարախոսությունը արդյունավետ միջոց է հենց իրավական տեքստերի օրինականացման համար (նրանց արդարացված, սոցիալականապես արժեքավոր նշանակություն տալու համար), ինչպես նաև ցանկալի իրավական իրականություն ստեղծելու համար: *Այդ նպատակների համար գիտական մեթոդները պիտանի չեն*, և պետք է օգնության կանչել *պրակտիկ փիլիսոփայությունը*, որն իդեալում պետք է գիտության և գաղափարախոսության միջնորդը լինի՝ վերջինիս ազատագրելով նեղ կուսակցական և խմբային շահերից, այն միավորի գիտական-փիլիսոփայական իրավաբանական ամբողջական համակարգի մեջ»:²⁵

Փաստորեն, այս տեսակետը կրկնում է փիլիսոփայության պատմությանը վաղուց հայտնի տեսական և պրակտիկ բանականության կամ տեսական և պրակտիկ փիլիսոփայության ոլորտների տարանջատման դրույթը: Այդ տրամաբանությամբ, եթե տեսական փիլիսոփայությունը նույնացվում է իրավունքի ընդհանուր տեսությանը, որն ուսումնասիրում է իրավունքի գոյը, ապա պրակտիկ փիլիսոփայությունը համարվում է բուն իրավունքի փիլիսոփայություն, որն արդեն ուսումնասիրում է իրավունքի պիտոն:

Չժվար չէ նկատել, որ այստեղ ի հայտ է գալիս գոյի և պիտոյի հին փիլիսոփայական հակադրությունը, որը փիլիսոփայության պատմության մեջ հայտնի է որպես Հյուսիս սկզբունք: Այս սկզբունքի համաձայն ենթադրվում է, որ մարդկային գործունեության յուրաքանչյուր տեսակ օժտված է իր յուրահատուկ նորմատիվային համակարգով, որոնք միմյանցից լիովին անջատ են և ինքնաբերական: Սա ոչ դասական փիլիսոփայության հիմնական սկզբունքներից մեկն է, ըստ որի՝ անանցանելի անջրպետ է դրվում գոյի և պիտոյի միջև: Այս սկզբունքի համաձայն, գոյի ոլորտից անցումը պիտոյականի ոլորտին անհնարին է: Գոյի և պիտոյի հակա-

դրությունը յուրովի է լուծում մարքսիզմը, որը պիտոն համարում է իդեալական գոյ:

Այստեղ մենք ստիպված ենք անդրադառնալ գոյի և պիտոյի հարաբերակցությանը և այդ ոլորտների առանձնահատկություններին: Գոյի և պիտոյի հարաբերակցությունը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ, այդ թվում, որպես գիտության և գաղափարախոսության, կամ ասենք, գաղափարականի և գոյաբանականի հարաբերակցություն: Այդ հարաբերակցության բնույթը պարզելու համար քիչ ավելի մանրամասն քննարկենք գոյի և պիտոյի ոլորտների առանձնահատկությունները:

Ինչպես նշվեց, գոյի և պիտոյի հարաբերակցության խնդիրն առաջին լուրջ քննարկման առարկա է դարձրել անգլիացի փիլիսոփա Դևիդ Հյումը: Տարբերելով գոյի և պիտոյի ոլորտները՝ նա գտնում էր, որ դրանք մարդկային իմացության բոլորովին տարբեր ոլորտներ են: Գոյի ոլորտը փաստերի ոլորտն է, այստեղ ցանկացած ենթադրություն կամ դատողություն կարող է լինել կեղծ կամ ճշմարիտ: Ի տարբերություն գոյի ոլորտի, պիտոյի ոլորտը սահմանում է, թե ինչպիսին պետք է լինի իրերի կարգը: Իսկ դա նշանակում է, որ իրերի կարգի մասին ոչ մի դատողություն չի կարող ճշմարիտ կամ կեղծ լինել: Գոյի մասին դատողությունները նկարագրական բնույթ ունեն, այդ դատողությունները դրական են կամ բացասական, հետևաբար դրանց ճշմարտության կամ կեղծության խնդիրը չափազանց կարևոր նշանակություն ունի: Իսկ այն դատողությունները, որոնք վերաբերում են պիտոյականի ոլորտին, ունեն արժեքային բնույթ: Դրանք կապված են մարդկանց հուզականային ոլորտի հետ, հետևաբար չի կարող այդ դատողությունների վերաբերյալ ճշմարտություն կամ կեղծիքի խնդիր ծագել: Նման դատողությունները ենթակա չեն ապացուցման կամ ժխտման:²⁶ Այսպես, օրինակ, ցանկացած գործող իրավական նորմ սահմանում է վարքագծի որոշակի կանոն, սահմանում է, թե ինչպիսին պետք է լինի մարդկանց վարքագիծը այս կամ այն ապագա իրավիճակում: Այսինքն՝ ցանկացած իրավական նորմ, որը ընդունվել և գործում է տվյալ հասարակարգում, անժխտելի փաստ է, գտնվում է գոյի ոլորտում: Սակայն այդ անժխտելի փաստի հիման վրա չի կարելի հետեվություններ կատարել այդ նորմը վերացնելու կամ նրա գործողությունը շարունակելու մասին: Այդ նույն տրամաբանությամբ

իրավունքի տեսական փիլիսոփայությունը, որը տվյալ դեպքում ևույնացվում է իրավունքի ընդհանուր տեսությանը, գործ ունի գոյի ոլորտի իրողությունների հետ: Իսկ իրավունքի պրակտիկ փիլիսոփայությունը, ըստ Էռթյան, գործ ունի իրավունքի պիտոյական ոլորտի հետ, ուսումնասիրում է ոչ թե այն, թե ինչպիսին է իրավունքը, այլ այն, թե ինչպիսին այն պետք է լինի:

Այս մտտեցումը թեպետ բավական գրավիչ է, բայց ևս խիստ խոցելի է: Բանն այն է, որ իրավունքի պրակտիկ փիլիսոփայությունը տարբեր քաղաքակրթություններում կարող է տարբեր լինել: Ամեն մի քաղաքակրթական-մշակութային միավոր ունի իրավունքի սեփական պրակտիկ փիլիսոփայությունը: Դա նշանակում է ևս, որ տարբեր մշակութային համատեքստերում իրավունքին կարող է տրվել տարբեր իմաստ և նշանակություն: Եվ համեմատություններ անցկացնել տարբեր քաղաքակրթական-մշակութային համատեքստում գործող իրավունքի պրակտիկ փիլիսոփայությունների միջև, պարզապես կոռեկտ չէ և գիտականորեն՝ անընդունելի:

Մշակութաբանական գրականության մեջ տարբեր քաղաքակրթական միավորները բնութագրվում են հետևյալ կերպ. «Ցանկացած մշակութային-պատմական ֆեոմենի ծագման մեջ (տվյալ դեպքում իրավունքի և իրավաբանական մշակույթի) անհրաժեշտ է տարբերակել երեք փուլ. նախադրյալներ, ծագում և ձևավորում (զարգացում): Ինքը՝ ֆեոմենը առաջանում է ծագման փուլում, նախադրյալներն այն պայմաններն են, գործընթացները և գործոնները, որոնք նախապատրաստում են ֆեոմենների ի հայտ գալը: Ամեն ինչ հարաբերականորեն պարզ կլինե, եթե մշակույթն իրենից ներկայացներ մեկ ամբողջություն և զարգանա մի վիճակից մյուսին (արիական մշակույթից՝ հուսկույն թագավորությունների մշակույթ, աստիկ մշակույթից՝ միջին դարեր, ապա ևոր ժամանակների մշակույթը): Այդ դեպքում ֆեոմենի ծագման փուլը կարելի էր տեղայնացնել մշակույթի որոշակի վիճակի համեմատությամբ, այնուհետև, բնութագրել ֆեոմենի ձևավորման նախադրյալներն ու գործընթացը: Սակայն մշակույթը մեկ ամբողջություն չէ, բացի այդ իրենց զարգացման մեջ հաջորդող մշակույթները հաճախ կրկնում են, բայց այլ պայմաններում, նախորդող մշակույթի որոշակի գծերը»:²⁷

Եթե նշված դատադրությունն արտացոլում է մշակութային զարգացման առանձնահատկությունները, ապա կարելի է պնդել, որ իրավունքի պրակտիկ փիլիսոփայությունը, տարբեր մշակութային համատեքստներում տարբեր բովանդակություն ունի: Դա նշանակում է նաև, որ իրավունքի ֆենոմենը ոչ միայն ժամանակային առումով կարող է տարբերվել նույնանման ֆենոմեններից, այլև՝ տարածականորեն: Իսկապես, հեռավոր արևելյան երկրների մշակույթի համատեքստում ձևավորված և զարգացած իրավունքը և իրավունքի համապատասխան տեսությունները համեմատության քիչ եզրեր ունեն Արևմտյան Եվրոպայի իրավունքի և իրավական տեսությունների հետ: Այստեղից կարելի է հետևություն անել նաև, և դա առավելապես վերաբերում է իրավունքի պրակտիկ փիլիսոփայությանը, որ պատմամշակութային տարբեր դարաշրջաններում այդ փիլիսոփայությունները տարբեր են և հոգևոր-իրավական կյանքում հետապնդում են տարբեր խնդիրներ: Դա պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքով: «Ժողովուրդների պատմական զարգացումը, գրում է նույն հեղինակը,՝ անընդհատ դեպի վեր ընթացող գործընթաց չէ, առաջընթացի տեսությունը հանրամատչելի փիլիսոփայության արդյունք է: Մասնավորապես, Եվրոպայի ժողովուրդներն անցել են հիմնականում նույն տնտեսական էվոյուցիան, ինչը և հին աշխարհի ժողովուրդները, թեև ավելի բարդ և հարուստ: Այդ առումով, միջնադարյան Եվրոպան պատմական զարգացման հաջորդ քայլը չէ: Նա իր զարգացումը սկսում է կրկին, վերադառնում է նույն նախնական աստիճաններին, որոնք վաղուց անցած են եղել»:²⁸

Բացի այդ, հավասարության նշան դնել իրավունքի տեսական փիլիսոփայության և իրավունքի ընդհանուր տեսության միջև, նույնացնել այդ տեսությունները, նշանակում է գիտական ուսումնասիրության ասպարեզից վերացնել այդ տեսություններից մեկը: Այդ տեսակետը ճշմարիտ համարելու պարագայում ստիպված ենք ընդունել, որ գոյություն ունի կա՛մ իրավունքի ընդհանուր տեսություն, կա՛մ իրավունքի տեսական փիլիսոփայություն: Ինչ վերաբերում է իրավունքի պրակտիկ փիլիսոփայությանը, որն, իբր, պետք է ուսումնասիրի իրավունքի պիտոն, ապա վերջինս ոչ թե գիտական, առավել ևս փիլիսոփայական, այլ գաղափարախոսական խնդիր է, հետևաբար հետևողական լինելու դեպքում պետք է

խոսենք ոչ թե իրավունքի պրակտիկ փիլիսոփայության, այլ իրավական գաղափարախոսության մասին:

Ի մի բերելով վերը նշվածը կարելի է ասել, որ իրավունքի գոյն ուսումնասիրող իրավունքի ընդհանուր տեսության և իրավունքի տեսական փիլիսոփայության ևույնացումը՝ մի կողմից, և իրավունքի գործնական փիլիսոփայությունը իրավական գիտելիքների ինքնուրույն մակարդակ համարելը՝ մյուս կողմից, խիստ քննադատելի դրույթ է:

Իրավական գիտելիքների տարբեր մակարդակների և այդ մակարդակների հարաբերակցության հարցը բուրժուազիայի այլ լուծում է ստանում ֆեոդալիզմի ժամանակահատվածի հարթությունում: Այդ տեսակետից թե՛ գործնական իրավագիտությունը, որն ընդգրկում է ճյուղային իրավաբանական գիտությունները, թե՛ իրավունքի ընդհանուր տեսությունը, որը ի մի է բերում ճյուղային իրավաբանական գիտությունների տեսական ընդհանրացումները և հետևությունները, ըստ էության, իրավաբանական գիտություններ են: Նրանք ուսումնասիրում են կեցության յուրահատուկ ոլորտի՝ իրավունքի աշխարհի երևույթները: Սակայն այս գիտությունները, նախ՝ օգտագործում են չպարզաբանված և խղճալակեանացված կատեգորիաներ և հասկացություններ, որոնց իմաստային աբսյուրդները և հիմքերն անհայտ են, երկրորդ՝ նշված գիտությունները ուսումնասիրում են իրավական եզակիություններ՝ առանց անդրադառնալու այդ եզակիություններն ընդգրկող ոլորտի սահմաններին և էությունական կառուցվածքներին:

Այս տեսակետից ճյուղային իրավաբանական գիտությունները և իրավունքի ընդհանուր տեսությունը, որպես կոնկրետ գիտություններ կարելի է համարել իրավական գիտելիքի առաջին մակարդակ: Իրավական գիտելիքների երկրորդ մակարդակը կարելի է համարել ֆեոդալիզմի ժամանակահատվածի ընդհանուր տեսությունը, որպես համապարփակ փիլիսոփայություն և մեթոդոլոգիա, որի միջոցով հետաքննվում է բացահայտել իրավական երևույթների ճանաչողության միջավայրային եղանակները: Մասնավորապես, տրանսցենդենտալ ֆեոդալիզմի ընդհանուր դրույթները հիմք ընդունելով՝ կարող ենք բացահայտել իրավական իմաստներ միակառուցող ինտելեկտուալ ակտերի նույնմատիկ-նույնտիկ կառուցվածքի առանձնահատկությունները,

պարզել՝ գոյություն ունե՞ն արդյոք ներմուծողության հատուկ իրավաբանական ակտեր, եթե այո, ապա ինչպիսի՞ն է դրանց կազմությունը և այլն:

Իրավունքի ֆեոմենոլոգիան ներառում է նաև իրավունքի, որպես կեցության առանձին ոլորտի գոյաբանության հիմնախնդիրների բացահայտումը, որն ընդգրկում է իրավունքի գոյաբանությունը կամ իրավունքի ռացիոնալ տեսությունը: Վերջինիս միջոցով հնարավոր է բացահայտել կեցության իրավական ոլորտի սահմանները և այդ ոլորտի երևույթներին իրավական իմաստ հաղորդելու նախապայմանները:

Իրավունքի ֆեոմենոլոգիան ներառում է նաև իրավական գիտելիքների սկզբնաղբյուրների, մասնավորապես իրավական ակնհայտությունների բացահայտման հիմնախնդիրը, որը կարող է լուծվել կենսաշխարհի, և վերջինս տարատեսակ՝ իրավական կենսաշխարհի մասին ուսմունքի շրջանակներում:

Այսպիսով, ֆեոմենոլոգիական տեսակետից կարելի է առանձնացնել իրավական գիտելիքների երկու հիմնական մակարդակ՝ իրավաբանական կոնկրետ գիտություններ, որոնք ներառում են ճյուղային իրավաբանական գիտությունները և իրավունքի ընդհանուր տեսությունը, իրավական գիտելիքների ֆեոմենոլոգիական մակարդակը, որը ներառում է տրանս-ցենտենտալ ֆեոմենոլոգիան, որպես համապարփակ մեթոդաբանություն, իրավունքի գոյաբանությունը կամ իրավունքի ռացիոնալ տեսությունը և վերջապես՝ ուսմունք՝ իրավական կենսաշխարհի մասին:

ՀՂՈՒՄՆԵՐ

¹ Алексеев С. С. Восхождение к праву. Понски и решения. М., 2001.С. 5.

² Алексеев С. С. Восхождение к праву. Понски и решения. М., 2001.С. 8.

³ Նույն տեղում, էջ 11:

⁴ Նույն տեղում, էջ 13:

⁵ Նույն տեղում, էջ 17:

⁶ Նույն տեղում, էջ 98:

⁷ Алексеев С. С. Восхождение к праву. Понски и решения. М., 2001.С. 101.

⁸ Նույն տեղում, էջ 388:

⁹ Алексеев С. С. Восхождение к праву. Понски и решения. М., 2001.С.388.

- ¹⁰ Жан-Луи Бержель. Общая теория права. М., 2000. С.19.
- ¹¹ Алексеев С. С. Восхождение к праву. Понски и решения. С.388.
- ¹² Нерсесянц В. С. Философия права. С. 8.
- ¹³ Керимов Д.А. Предмет философии права / Государство и право.1994. N 7.
- ¹⁴ Нерсесянц В. С. Философия права. С. 10.
- ¹⁵ Тихонравов Ю. В. Философия. М., 1999. С. 213.
- ¹⁶ Сырых В. М. Логические основания общей теории права.Т.1.Элементный состав. М., 2004. С.164.
- ¹⁷ Նույն տեղում, էջ 166:
- ¹⁸ Նույն տեղում, էջ 293:
- ¹⁹ Философия. Под ред. Коханоского В. П. Ростов, 1999. С. 11.
- ²⁰ Мамардашвили М. Необходимость себя. М., 1996. С. 22.
- ²¹ Лейст О. Э. Сущность права. Проблемы теории и философии права. С. 217.
- ²² Лейст О. Э. Сущность права. Проблемы теории и философии права. С. 219.
- ²³ Նույն տեղում, էջ 220:
- ²⁴ Նույն տեղում, էջ 222:
- ²⁵ Поляков А. В. Общая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. С. 36.
- ²⁶ Минзес Л. Фон.Теория и история. Интерпретация социально-экономической эволюции. М., 2001. С. 23.
- ²⁷ Розин В. М. Генезис права. М., 2003. С.120-121.
- ²⁸ Розин В. М. Генезис права. М., 2003 С.121: